

ՊԱՐՏԱԿԻ ԺՈՂՈՎԻՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՆ ՎԵՐՁԻՆ ՅՈԴՈՒԱԾԸ

Աստուածաշունչի կանոնին հարցը կամ ենոր խնդիր մըն է եկեղեցական պատմութեան և աստուածաբանութեան տեսակէտով։ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին զրազած է Աստուածաշունչի կանոնին հարցով, և տուած է պաշտօնաւկան որոշում այդ մասին։ Երբ քրքրենք մեր եկեղեցոյ կին կանոնագիրքը այս հարցումին պատասխան մը գտնելու փափաքով, իրեւ ազգային-եկեղեցական ժողովի որոշում կը հանդիպինք Պարտաւի ժողովին կանոններուն վերջին յօդուածին միայն։

Պարտաւի ազգային-եկեղեցական ժողովը գումարեց Սիոն կաթողիկոս (767-775), 771 թուին, Ազուանից մայրաքաղաքին՝ Պարտաւի մէջ։ Ժողովին ներկայ էին Հայոց Սիոն և Ազուանից Դաւիթ կաթողիկոսները, հանգերձ եպիսկոպոսներով և իշխաններով։ Ժողովը սահմանեց 24 կանոններ, որոնք ընդհանրապէս կը վերաբերին եկեղեցական խնդիրներուն։ Եկեղեցականներու կենցաղին և կրօնական ծէսերուն՝ Հաղորդութեան, Մկրտութեան, Պատկի, և այլն։

Ահաւասիկ վերջին՝ 24րդ կանոնը որ յատկապէս կը կազմէ նիւթը մեր այս յօդուածին։

«Աղջիկ Ահաւասալ թէ ապարակի իցէ մի իշխանութեան քահանայքն այնպիսոյն պատկնել կամ զուգել ընդ առն ամուսնութիւն մինչեւ սրբեցի յապարակէն եւ ապա ա-

մուսնասցի։ Եւ եղիցի ամենեցուն ձեզ եկեղեցականաց եւ աշխարհականաց պաշտելի գիրք սուրբք ի Հին եւ ի Նոր Կտակարանաց։ Մովսէսի գիրք Ծննդոցն, Ելիցն, Ղեւտականն, Թիւք, Երկրորդ Օրէնք, Եթուու Նաւեայ, Դատաւորացն և Հոռովայն, Թագաւորութեանց Դ., Մհացորդացն գրոց Աւուրք Բ., Եզրի Բ. Բանք, Գիրք Յովիրայ, Սաղմօսացն Ա. Գիրք, Սոզոմոնի Գ. Գիրք, Թիւք. Առաջ Մարգարէքն, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ։ Եւ արտաքուստ պատգամաւորեսցի առ ի ուսուցանել զձեր մանկուն զուսումնարազումնսն Սիրաքայ Խամսութիւն»(*).

Այս յօդուածը իրապէս Պարտաւի ժողովէն բիմած կանոն մըն է, թէ ոչ այդ ժողովի 24 կանոններուն վրայ յետոյ կցուած յաւելուած մը՝ վերցուած ուրիշ ազբիւրէ։

Համեմատութիւն մը այդ յօդուածին Բ. Առաքելական կամ Կղեմայ կոչուած կանոններուն վերջին Զ. յօդուածին, եւ Հարցն Հետեղուաց վերապրուած կանոնին դարձեալ վերջին՝ իի. յօդուածին հետ, կրնայ լուսուրանել մեզ։

Ահա յիշեալ երեք կանոններուն հայերէն նապահը գովէքով զրուած։

(*) Հայոց Խելիքավական Բրաւունիք, Ն. Վ. Մելիքթանցեան, 1933, Նույի, էջ 436, Համեմատուած Ս. Յակոբեացն Մատենադարանի թիւ 1104 Ձեռագրին հետ։

Բ. Առաքելականի (*)

Եղիցին ձեզ ամենեցուն
Եկեղեցականաց
և աշխարհականաց պաշտելի գիրք սուրբ Հին և Նոր Կտակարանացն։
Մովսէսի Գիրք Ծննդոցն կտակարանաց։
Եթե
Ղեւտականն
Թիւքն

Հարցն Հետեղուաց (**)

Եւ եղիցի ձեզ ամենեցուն
Եկեղեցականաց
Սուրբ Գիրք Հին և Նոր
Կտակարանաց։
Մովսէսի Ծննդոցն
Եթե
Ղեւտականն
Թիւք

Ժողով Պարտաւի

Եւ եղիցի ամենեցուն ձեզ
Եկեղեցականաց
և աշխարհականաց պաշտելի գիրք սուրբ Հին և Նոր Կտակարանաց։
Մովսէսի Գիրք Ծննդոցն
Ելից
Ղեւտականն
Թիւք

(*) Մելիքթանցեան էջ 140, Ս. Էջմիածնի Խ-440 Զ. Էն առնուած է (էջ 113 Մելիք. Յոզ. 85)։

(**) Մելիքթանցեան էջ 483, Հմտու. Մելիք էջ 1104, Հմտու. Մելիք. Յիսելի է որ առանձին համրուած կանոն մը չէ, այդ յաւելուած մը ուրիշ կանոնի մը վրայ, որ կը խօսի ժողովքականներուն վարժուածքին չուրի։

Երկրորդ Օրէնքն	Երկրորդ Օրէնքն	Երկրորդ Օրէնքն
Յեռու Նաւեայ	Յեռու Նաւեայ	Յատաւորացն և
Դատաւորգին	Դատաւորացն	Հռութայն
Հռութայն	Հռութայն	Թագաւորութեանց Դ.
Թագաւորութեանցն Դ.	Թագաւորութիւնք չորք	Մնացորդացն զրոց աւուրք Բ.
Մնացորդացն գիրք Բ.	Մնացորդացն Աւուրք	Եղրի Բանքն Բ.
Եղրի Բանքն Բ.	Եղրի Երկու Բանք	Եղրի Յանք
Յարն	Յուլիս	Գիրք Յուլիսայ
Մաղմասաց գիրք Ա.	Մաղմասաց ձեր	Մաղմասացն Ա. յիրք
Մողմասն գիրք Գ.	Մողմասին Գ.	Մողմասնի Գ. գիրք
Կայակի	Կայակի	Բժ. ան Մարդարէքն
Երեմաս	Երեմաս	Երեմաս
Եղեկիէլ	Եղեկիէլ	Եղեկիէլ
Դանիէլ	Դանիէլ	Դանիէլ
Եւ արտաքուստ պատգա-	Եւ Կալէիք	Եւ արտաքուստ պատգա-
մաւորեցի առ ի յուսուցանել	առ ի իրատել	մաւորեցի առ ի օւսուցանել
զեր մանկունն յուսման,	զմանկունն ձեր	զեր մանկունն զուսումն
բաղում Սիրաքս ին իմաս-	Սիրաքս	նարագունն Սիրաքայ
տութեամբ։	և աէր ընդ ձեզ։	իմաստութիւնն։

Երեք Կանոններու այս առաջնիքերադրու-
թիւնը շատ որոշ կը ցուցնէ անոնց մերձա-
ւոր նմանութիւնը՝ Մասնաւորապէս գի-
տելի են հետեւեալ հէտերը։

1. — Երեքն ալ վերնագրին մէջ կը
խոստանան տալ նաեւ նոր Կտակարանի
կանոնական գիրքերուն ցուցակը։ բայց
վարը չեն տուած զայն։ — Դժուար թէ
երեքին ալ նոր Կտակարանի վերաբերող
մասը արկածով, անկախորէն եւ միեւնոյն
մեղէն կորսուած ըլլայ։

2. — Երեքն ալ չունին Հ. Կ. ի կա-
նոնական գիրքերէն նսթերը։

3. — Երեքն ալ ամէնէն վերջը կը յի-
շեն Սիրաքը, իրբե հրահանգիչ ընթերցա-
նութեան գիրք։ — Ուշագրաւ է առաջինին
եւ երրորդին կիրարկած բանաձեւերուն
մեծ նմանութիւնը։

Նորդեն խորհելու թէ Պարտաւի Ժողովը
յատկապէս չէ զրադած Ս. Գրոց Կանոնի
հարցով, և այդ նպատակով յօդուած չէ
խմբագրած։ ապա թէ ոչ մենք պէտք էր
որ ունենայինք ատոր նուիրուած առանձին
յօդուած մը, եւ, ոչ միայն զին այլ նաև
նոր Կտակարանի Կանոնական գիրքերուն
ցանկը։ Այս Կանոնը իր ներկայ ձևին մէջ
կը թուի ըլլալ պատահական յաւելում մը
Պարտաւի Ժողովին Կանոններուն վրայ,
կտարուած խմբագրովի մը կամ ընդօրին-
նակողի մը կողմէ, որ իրեն ազգիւր ունե-
ցած է հնագոյն Կանոն մը, նման վերեւ
համեմատութեան դրուած Կանոններուն,
կամ նոյն անոնց հետ, եւ հետեւաբար ան-
չի ներկայացներ Հայ Եկեղեցւոյ պաշտօ-
նական մէկ Ժողովին հեղինակութիւնը Ս.
Գրոց Կանոնին վերաբերմամբ։

Այս նկատողութիւնները մեզ կ'առաջ-

ն. Վ. ՄՈՎԱԿԱՆ